ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 օգոստոսի 2026 թվականի N388-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 8-Ի N308-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ո ր ո շ ու մ եմ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2022 թվականի օգոստոսի 8-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման մարզային հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 15-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման մարզային հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» N15-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N308-Ա որոշման N1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2026-08-14 17:54:08 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

ք. Կապան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Սյունիքի
մարզպետի
2026 թվականի օգոստոսի 14-ի
N 388Ա որոշման

«Հավելված N1
Հայաստանի Հանրապետության Սյունիքի
մարզպետի
2022 թվականի օգոստոսի 8-ի N308-Ա որոշման

Կազմ
արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման Սյունիքի մարզային հանձնաժողովի

Հ. Հարությունյան	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
Ն.Ղազարյան	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալ
Կ. Բալյան	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի խորհրդական
Դ. Հովհաննիսյան	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ (համաձայնությամբ)
Ս. Ավետիսյան	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ, հանձնաժողովի քարտուղար
Մ. Կոստանդյան	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ
Ա. Նահապետյան	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ
Մ. Աբգարյան	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ
Ա.Թադևոսյան	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ:»:

Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար **Է.Մարտիրոսյան**